

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. փետրվարի 27-ին տեղի ունեցած ԳՊՄԻ-ի ֆիզմաթ ֆակուլտետի

ֆակուլտետային խորհրդի թիվ 7 նիստի

Նախագահ՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

Ֆակուլտետային խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան

Նիստին մասնակցում էին ֆակուլտետային խորհրդի 14 անդամները:

### Օրակարգ՝

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատումն ըստ ուսանողների և դասախոսների:
2. Ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերի հաստատում:
3. Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումն ըստ առաջադիմությունների/առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:
4. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվություն:

**Զեկուցող՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան**

1. **Լսեցին-** Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքներն ըստ ուսանողների և դասախոսների հաստատման մասին:

**Արտահայտվեցին-** պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

**Որոշեցին-** Հաստատել առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքներն ըստ ուսանողների և դասախոսների:

**2. Լսեցին-** Մ. Մարգարյանի հաղորդումը ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման մասին :

**Արտահայտվեցին-** պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

**Որոշեցին-** Հաստատել ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերը:

**3. Լսեցին-** Մ. Մարգարյանի հաղորդումն առաջին կիսամյակի արդյունքների ամփոփման մասին:

**Արտահայտվեցին-** պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

Ներկայացրեցին առաջին կիսամյակի արդյունքները ըստ առաջադիմությունների/առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:

Աղանյան Վահրամ (մաթ. առկա 3 կուրս)- 12 կրեդիտ

Ասատրյան Ասատուր(մաթ. առկա 3 կուրս)- 11 կրեդիտ

Մկրտչյան Արտուշ (մաթ. առկա 3 կուրս)- 12 կրեդիտ

Բիչախյան Արման( ֆիզիկա առկա 3 կուրս) – 2 կրեդիտ

Թարգյան Լուսինե ( ֆիզիկա առկա 3 կուրս)- 2 կրեդիտ

Գրգորյան Ժորա (կառ. առկա 1 կուրս)- գորակոչվել է ՀՀ բանակ

Բարսեղյան Հայկազ (ի.կ.մ . առկա 1 կուրս)- գորակոչվել է ՀՀ բանակ

Բաղոյան Անի (կառ .մագ. 1 կուրս)- համաձայն իր դիմումի դուրս է եկել ինստիտուտից

Մովսիսյան Քրիստինե (ի.կ.մ . 2 առկա կուրս)- համաձայն իր դիմումի դուրս է եկել ինստիտուտից

**Որոշեցին-** Հեռացնել կառավարում բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող Մկոյան Աշոտին, ինչպես նաև առաջին կիսամյակի արդյունքները համարել բավարար:

**4. Լսեցին-** Մ.Մարգարյանի հաղորդումն որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվության մասին:

**Արտահայտվեցին-** Ֆիզմաթ ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատու Անի Սահակյանը ներկայացրեց կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները:

2014-2015 թ ուս տարվա I կիսամյակում Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի Որակի ապահովման կենտրոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները`

1. ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծություն
2. ԳՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծության աշխատանքների ակտիվ մասնակցություն ունեցած ուսանողների պարզևատրում
3. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցաթերթիկների վերլուծված արդյունքների վերաբերյալ ամբիոնների նիստերի քաղվածքների ուսումնասիրություն:
4. ՄՈՒՀ-ի առաքելությունների և նպատակների SWOT վերլուծություն

5. ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության SWOT վերլուծություն
6. ԳՊՄԻ-ի ՊՈԱԿ-ի անհատական աշխատանքների կազմակերպմանն առնչվող առաջարկություններ
7. ԳՊՄԻ վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, վերլուծություն, իրականացում
8. ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման իրականացում և վերլուծություն
9. ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն
10. Ուսանողական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության գնահատում ֆոկուս խմբերի միջոցով
11. Ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն

Ինչպես նաև ներկայացվեց կատարված յուրաքանչյուր աշխատանքի արդյունքները:

**Որոշեցին-** Ֆիզմաթ ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատուի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Ֆիզմաթ ֆակուլտետային

խորհրդի նախագահ՝

Մ. Մարգարյան

Ֆիզմաթ ֆակուլտետային

խորհրդի քարտուղար՝

Ա. Սահակյան

27.03.2015թ.